ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5521-Ա «11» նոյեմբերի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՖԵՆՅԱ ՆՈՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղի հարցազրույցի 2026 թվականի հոկտեմբերի 20-ի արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի հոկտեմբերի 29-ի հ. Ն/73142-26 գրությունը՝

1. Ֆենյա Նորիկի Հովհաննիսյանին 2026 թվականի նոյեմբերի 12-ից նշանակել «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի նոյեմբերի 12-ից մինչև 2031 թվականի նոյեմբերի 12-ը ներառյալ:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

3. «Երևանի «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Հարությունյանին ազատել նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ